« 07 » փետրվար 2025թ. No 755 - Ա

# «ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐ ԵՎ ՄԱՆՐԷՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ: ՆՈԶՈԿՈՄԻԱԼ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԱՍ 1-2» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

**2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ)**

**ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**

- Գրություն՝ 24.03-11.04
- Թիրախային լսարան՝ մանրէաբաններ, համաճարակաբաններ, ինֆեկցիոնիստներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, ուռոլոգներ, ընտանեկան բժիշկներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 5-15 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 42 տեսական և 16 գործնական կրեդիտ.
  մաս 1-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 15 տեսական և 5 գործնական կրեդիտ,
  մաս 2-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 27 տեսական և 11 գործնական կրեդիտ,
  դասավանդողներ Սիլվա Գաբրիելյանին՝ ՇՄԶ 13 տեսական և 2 գործնական կրեդիտ, Օլգա Դավթյանին՝ ՇՄԶ 29 տեսական և 14 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010235310

| | | |
|---|---|---|
| **Մաս 1՝ EUCAST ձեռնարկ, հակաբիոտիկների զգայունության գնահատում** | | |
| **Օր 1** | | |
| 30 րոպե | Հարցազրույց | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Հակաբիոտիկներ: Պատմական տեղեկություն: Ծագումը, քիմիական կառուցվածքը և ընդհանուր դասակարգումը | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ֆարմակոդինամիկան և ֆարմակոկինետիկան: Հակաբիոտիկների կողմնակի ազդեցությունը | Օլգա Դավթյան |
| 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Դիսկ-դիֆուզիոն եղանակով (ԴԴԵ) մանրէների զգայունության որոշման մեթոդի քննարկում. համաձայն EUCAST պահանջների | Օլգա Դավթյան |
| **Օր 2** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Հակաբիոտիկների ընտրության չափանիշները զգայունության որոշման նպատակով: Անամնեստիկ տվյալների | Օլգա Դավթյան |

| | | |
|---|---|---|
| | կարևորությունը մանրէաբանի կողմից հակաբիոտիկների ճիշտ ընտրության համար | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>EUCAST – ձեռնարկից օգտվելու կարգը. տարբեր մանրէների աճի ճնշման գոտիների գնահատման ժամանակ ծանոթությունների անալիզի անհրաժեշտությունը | Օլգա Դավթյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Հակաբիոտիկազգայունության  թեստի իրականացման ցուցադրություն | Օլգա Դավթյան |
| **Օր 3** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>β-լակտամային հակաբիոտիկների դասակարգումը և բնութագիրը: Բակտերիալ բջջի վրա ազդեցության մեխանիզմը: Տվյալ խմբի պրեպարատների նոր ներկայացուցիչները | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Էնտերոբակտերիաները որպես աղիքային վարակների հարուցիչներ: Shigella, Salmonella , ախտածին E.coli -ների մանրէաբանական բնութագիրը: Ախտածնության գործոնները: Կայունության տարածվածությունը այս հարուցիչների շրջանում | Օլգա Դավթյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Ախտածին էնտերոբակտերիաների կենսաքիմիական նույնականացման թեստերի իրականացման ցուցադրություն | Օլգա Դավթյան |
| **Օր 4** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ցեֆալոսպորինային հակաբիոտիկների դասակարգումը և բնութագիրը: Բակտերիալ բջջի վրա ազդեցության մեխանիզմները: Տվյալ խմբի պրեպարատների նոր ներկայացուցիչները | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Էնտերոբակտերիաները, որպես արտաաղիքային վարակների հարուցիչներ: Արտաաղիքային էշերիխիոզների պաթոգենեզը | Օլգա Դավթյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Shigella, Salmonella – ների կենսաքիմիական նույնականացման թեստերի արդյունքների հաշվարկ: ԴԴ եղանակով ախտածին էնտերոբակտերիաների հակաբիոտիկազգայունության թեստավորում | Օլգա Դավթյան |
| **Օր 5** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ամինոգլիկոզիդների բնութագիրը, ազդեցության սպեկտրը, կողմնակի ազդեցությունները: Ամինոգլիկոզիդների տոքսիկությունը: Տվյալ խմբի պրեպարատների նոր ներկայացուցիչները: Պոլիմիքսինների բնութագիրը: Կոլիստինի կիրառման ժամանակակից մոտեցումները | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Տետրացիկլինների, մակրոլիդների դասակարգումը և բնութագիրը: Բակտերիալ բջջի վրա ազդեցության մեխանիզմները: Զգայուն մանրէների սպեկտրը: Կողմնակի ազդեցությունները | Օլգա Դավթյան |

| | | |
|---|---|---|
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Ախտածին էնտերոբակտերիաների հակաբիոտիկազգայունության թեստավորման արդյունքների հաշվարկ | Օլգա Դավթյան |
| **Մաս 2՝ Նոզոկոմիալ վարակների խնդիրը, մանրէների կայունությունը հակաբիոտիկների նկատմամբ** | | |
| Օր 1 | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Քինոլոնների, նիտրոֆուրանների, իմիդազոլների դասակարգումը և բնութագիրը: Սուլֆոնամիդներ: Ազդեցության մեխանիզմը: Զգայուն մանրէների սպեկտրը: Կողմնակի ազդեցությունները | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Հասկացություն նոզոկոմիալ ախտածինների մասին: Նոզոկոմիալ վարակների առաջացման պատճառները | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Ախտածին և պայմանական ախտածին էնտերոբակտերիաներ, նրանց դերը մարդու միկրոֆլորայի կազմում | Սիլվա Գաբրիելյան |
| Օր 2 | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Մարդու միկրոբիոցենոզները: Վերին շնչուղիների մանրէների հիմնական խմբերի բնութագիրը | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Խորխի միկրոֆլորան: Թոքաբորբերի հարուցիչների մանրէաբանական բնութագիրը: Նոզոկոմիալ թոքաբորբեր | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Կլինիկական նմուշների ցանքի եղանակի քննարկում, սննդային միջավայրերի ընտրության հիմնավորում: Հիմնական էթիոլոգիական նշանակություն ունեցող մանրէների տեսակների ցանք | Օլգա Դավթյան |
| Օր 3 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Հակաբիոտիկակայունություն: Կայունության (ռեզիստենտության) մեխանիզմները: Ռեզիստենտության գենետիկական դետերմինանտները: β-լակտամազային գրամդրական մանրէների դասակարգումը, կլինիկական նշանակությունը | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վերին շնչուղիների վարակների հարուցիչների հետ: S. aureus,Haemophilus influenza, պնևմոկոկի զգայունության որոշում ԴԴ-եղանակով | Օլգա Դավթյան |
| Օր 4 | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>β-լակտամազների դասակարգումը (շարունակություն): Գրամբացասական մանրէների լայն սպեկտրի β-լակտամազներ (ESL) և մետաղաբետալակտամազներ: Կլինիկական նշանակությունը | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Չֆերմենտացնող գրամբացասական բակտերիաներ (ՉԳԲՄ): Մանրէաբանական բնութագիրը, կլինիկական նշանակությունը | Սիլվա Գաբրիելյան |

| | | |
|---|---|---|
| 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Լայն սպեկտրի β-լակտամազներ (ESBL) արտադրող շտամների ցանք | Օլգա Դավթյան |
| **Օր 5** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Տղամարդկանց միզասեռական ուղու միկրոբիոցենոզը: Ախտաբանական իրավիճակներ, հիմնական էթիոլոգիական գործոնները | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>ESBL և մետաղաբետալակտամազներ արտադրության հայտնաբերման (դրսևորման) մեթոդները | Օլգա Դավթյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>β-լակտամազներ արտադրող մանրէների հակաբիոտիկազգայունության թեստի իրականացում (էնտերոբակտերիաներ, չֆերմենտացնող գրամբացասական բակտերիաներ) | Օլգա Դավթյան |
| **Օր 6** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Կանանց միզասեռական ուղու միկրոբիոցենոզը: Հեշտոցի նորմոֆլորան | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Բակտերիալ վագինոզ: Հեշտոցի կանդիդոզ: Մանրէաբանական խախտումների բնութագիրը | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>β-լակտամազներ արտադրող մանրէների հակաբիոտիկազգայունության թեստի արդյունքների ամփոփում | Օլգա Դավթյան |
| **Օր 7** | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Ուրոլոգիայի Եվրոպական ասոցիացիայի միզուղիների վարակի կլինիկական ձեռնարկի (EAУ) - 2023 քննարկում (վերլուծություն): Ասիմպտոմատիկ բակտերիուրիա, չբարդացված ցիստիտ, միզուղիների ռեցիդիվող վարակ (ИМП), չբարդացված պիելոնեֆրիտ | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Հակաբիոտիկների դասակարգումը, նրանց ազդեցության մեխանիզմները բակտերիալ բջիջի վրա: Հակաբիոտիկակայունության մեխանիզմները | Օլգա Դավթյան |
| **Օր 8** | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ուրոլոգիայի Եվրոպական ասոցիացիայի միզուղիների վարակի կլինիկական ձեռնարկի (EAУ) – 2023 քննարկում (շարունակություն):<br>Միզուղիների կաթետեր-ասոցացված վարակներ /ՄԿԱՎ/, ուրոսեպսիս | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ուրոլոգիայի Եվրոպական ասոցիացիայի միզուղիների վարակի կլինիկական ձեռնարկի (EAУ) – 2023 քննարկում (շարունակություն): Բակտերիալ պրոստատիտ, սուր | Օլգա Դավթյան |

| | | |
|---|---|---|
| | ինֆեկցիոն էպիդիդիմիտ: Առավել հավանական հարուցիչների բակտերիաբանական բնութագիրը, նրանց դերը տարբեր խմբերի բուժառուների մոտ: Մոլեկուլյար-կենսաբանական մեթոդների նշանակությունը ախտորոշման գործում | |
| 1 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Բակտերիալ պրոստատիտի կասկածի դեպքում կլինիկական նմուշի ցանքի եղանակի քննարկում: Սննդային միջավայրերի ընտրության հիմնավորում: Իմիտացիոն կլինիկական նմուշի ցանք | Սիլվա Գաբրիելյան |
| Օր 9 | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Ուրոլոգիայի Եվրոպական ասոցիացիայի միզուղիների վարակի կլինիկական ձեռնարկի (EAУ) – 2023 քննարկում (շարունակություն): Ոչ գոնոկոկային ուրետրիտ: Ախտորոշման եղանակները. Քսուկի ներկում ըստ Գրամի, ՊՇՌ, մեզի մեկ չափաբաժնի ցանք | Օլգա Դավթյան |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Էյակուլյատի միկրոֆլորան: Գրականության տվյալների համեմատական քննարկում: Մանրէների խմբերի բնութագիր | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Բակտերիալ պրոստատիտի կասկածի դեպքում իմիտացիոն կլինիկական նմուշի ցանքի արդյունքների նախնական հաշվարկ | Օլգա Դավթյան |
| Օր 10 | | |
| 1 ժամ 30 րոպե | **Դասախոսություն**<br>Նոզոկոմիալ վարակները տարբեր պրոֆիլի բաժանմունքներում, հիմնական էթիոլոգիական նշանակության մանրէները: Արդյունավետ բուժման համար համագործակցության կարևորությունը մանրէաբանի, համաճարակաբանի և բուժող բժշկի միջև: Պրոֆիլակտիկ միջոցառումների անհրաժեշտությունը բաժանմունքներում նոզոկոմիալ հարուցիչների տարածման կանխարգելման նպատակով | Սիլվա Գաբրիելյան |
| 1 ժամ | **Դասախոսություն**<br>Մանրէաբանական հետազոտության և հակաբիոտիկագրամայի արդյունքների ձևակերպում: Իրավիճակային խնդիրների քննարկում | Օլգա Դավթյան |
| 1 ժամ 30 րոպե | **Գործնական աշխատանք**<br>Բակտերիալ պրոստատիտի կասկածի դեպքում իմիտացիոն կլինիկական նմուշի ցանքի արդյունքների վերջնական հաշվարկ: Մանրէաբանական հետազոտության և ռացիոնալ հակամանրէային պրեպարատների ընտրության ստրատեգիայի վերջնական քննարկում | Օլգա Դավթյան |